ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1955 Общественные науки

Վասպուր Մելիքսեթյան

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1926—1929 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Սովետական Միության սոցիալիստական ինդուստրացման հետ սերտորեն շաղկապված՝ 1926—1929 թթ. բուռն թափով զարգանում էր Սովետական Հայաստանի արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը։

Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ կատարված ներդրումների գումարը 1925—1926 տնտեսական տարում կազմեցին մոտ 11 միլիոն ռուբլի, որը երկու և կես անգամ գերազանցում էր նախորդ յուրաքանչյուր տնտեսական տարվա համապատասխան ներդրումից։ Հաջորդ՝ 1926—1927 տնտեսական տարում ներդրումները կազմեցին 18,7 միլիոն ռուբլի, այսինքն՝ այնքան, որքան ներդրվել էր ամբողջ վերականգնման շրջանի հինգ տարիներին։ Ներդրումների գումարը օրինաչափորեն տարեց տարի ավելի բարձրանալով՝ 1927—1928 տնտեսական տարում կազմեց 24,6 միլիոն ռուբլի։

Այդ ներդրումների հիմնական մասը հատկացվեց էներգետիկ, պղնձարդյունաբերության, քիմիական, մետաղամշակման արդյունաբերությանը, որոնք ունեն ինդուստրիալ խոշոր նշանակություն։

Բավական է հիշատակել այն փաստը, որ 1927 թվականին՝ նախապատերազմյան շրջանի համեմատությամբ Հայաստանում էլեկտրակայանների թիվը կրկնապատկվեց, իսկ արտադրված էլեկտրաէներգիայի քանակն ավելացավ չորս անգամ։

Ակներև էին հաջողությունները նաև գյուղատնտեսության բնագավառում։ Շնորհիվ մեր երկրի բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության սերտ դաշինքի, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ իրագործվում էր Լենինյան կոոպերատիվ պլանը։

Հայաստանում 1926 թվականին հացահատիկային կուլտուրաների ցանքերի տարածությունը հասել էր 1913 թ. մակարդակին, իսկ տեխնիկական կուլտուրաների մակարդակը 11 տոկոսով գերազանցում էր նախապատերազմյան մակարդակին։

* * *

ՍՍՌՄ-ում սոցիալիստական ինդուստրացման հետագա հզոր վերելքը չէր կարող տեղի ունենալ առանց մեր երկրի ամբողջ բնակչության կուլտուրական մակարդակի բարձրացման։

Նոր՝ սոցիալիստական ինդուստրացման ժամանակաշրջան թևակոխած մեր երկիրը նոր ձևով էր առաջ քաշում նաև ժողովրդական կրթության հարցերը։

Լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության հիման վրա, Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության ամենօրյա հոգատարության շնորհիվ, սոցիալիստական ինդուստրացման տարիներին հայ ժողովրդի կուլտուրան հասավ մի նոր աստիճանի։

Տեխնիկան արդյունաբերության ու հողագործության մեջ արմատավորելու, սոցիալիստական արդյունաբերության հզոր վերելքն ապահովելու, գյուղատնտեսությունը սոցիալիստական ուղիով առաջ տանելու համար պետք էր բարձրացնել մեր երկրի աշխատավորության կուլտուրական մակարդակը, ամենից առաջ՝ նրա ընդհանուր գրագիտությունը։

Վերականգնման շրջանի տարիներին որոշ աշխատանք կատարվել էր կուլտուրական շինարարության բնագավառում, սակայն դա սկսած մեծ գործի միայն սկիզբն էր։

Ամենից առաջ պնհրաժեշտ էր մասսայական շարժում սկսել անգրագիտության վերացման գործում։

Մեր երկրի ուսուցչությունը, պրոֆմիութենական և կոմերիտական կազմակերպությունները, «Կորչի անգրագիտությունը կամավոր ընկերությունը», Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ մեծ օգնություն ցույց տվեցին լուսավորության օրգաններին՝ բնակչության միջից անգրագիտությունը վերացնելու ուղղությամբ։

1926—1929 թվականներին հսկայական աշխատանք է կատարվում Սովետական Հայաստանում՝ մեծահասակ բնակչության միջից անգրագիտությունն ու կիսագրագիտությունը վերացնելու գործում։ Ռեսպուբլիկայում այդ տարիներին ընդարձակվում է լիկկայանների, կիսագրագետների դպրոցների ցանցը։ Ավելի քան 3000 կոմերիտականներ, պրոֆ-ակտիվիստներ անհատական կարգով տներում պարապմունքներ էին անցկացնում։ 1929 թվականի մայիսին Համկ(բ)Պ ԿԿ-ն հատուկ որոշում ընդունեց՝ մեծահասակ բնակչության միջից անգրագիտությունը վերացնելու ուղղությամբ տարվող պայքարն ուժեղացնելու մասին։ 1929 թվականին միութենական և ռեսպուբլիկական բյուջեներով լրացուցիչ հատկացումներ կատարվեցին այդ նպատակի համար։

Համկ(բ)Պ ԿԿ-ի որոշման հիման վրա Հայաստանի Ժողկոմսովետին կից կազմակերպվեց անգրագիտության վերացման արտակարգ հանձնաժողով, իսկ պրակտիկ աշխատանքները գլխավորելու համար Հայաստանի Լուսավորության ժողովրդական կոմիսարիատում կազմակերպվեց անգրագիտության վերացման վարչություն։ Անգրագետների և կիսագրագետների դպրոցների համար մշակվեցին ուսման հատուկ պլաններ ու ծրագրեր, լույս տեսան դասագրքեր։ Ինչպես ամբողջ ՍՍՌՄ-ում, նույնպես և Հայաստանում անգրագիտության վերացման համար մղվող պայքարը դարձավ համաժողովրդական, համապետական գործ։ Ռեսպուբլիկայի բոլոր քաղաքներում, գյուղերում աշխատանքն ավարտվելուց հետո, երեկոները լիկկայաններ էին հաճախում կամ տներում պարապում տասնյակ հազարավոր մեծահասակ քաղաքացիներ։ Հայաստանում 1926—1929 թվականներին գրագետ դարձան ավելի քան 140 հազար մեծահասակ բնակիչներ [1]։

Սովետական Հայաստանի առաջին հնգամյա պլանում ծրագրվեց հիմնականում վերացնել մեծահասակ բնակչության անգրագիտությունն ու կիսագրագիտությունը, որն իրականացվեց հաջողությամբ։

Սոցիալիստական ինդուստրացման համար մղվող պայքարի տարիներին լայն աշխատանք էր կատարվում մասսայական դպրոցների, բանֆակների ու

---

[1] Տե՛ս «Ժողովրդական լուսավորություն» ամսագիր, 1930, № 6, Երևան։

տեխնիկումների, արհեստագործական դպրոցների և բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանցի ընդարձակման ուղղությամբ։

ՀամԿ(բ) պարտիայի XV համագումարի դիրեկտիվները՝ կուլտուրական շինարարության հարցերի մասին, մեծ նշանակություն ունեցան Սովետական Միության բոլոր ժողովուրդների դպրոցական կրթության աննախընթաց վերելքի համար։

Բարձրագույն ուսումնական հաստատություններին որակյալ կոնտինգենտ տալու նպատակով՝ երկրորդ աստիճանի դպրոցներում մտցվեց ուսման տասներորդ տարին (ութ տարվա փոխարեն)։ Աշխատանքային դպրոցների 9—10-րդ դասարաններին տրվեց ինդուստրիալ-տեխնիկական թեքում։ Որակյալ բանվորական ուժի պակասը լրացնելու համար կազմակերպվեցին ֆաբրիկա-գործարանային դպրոցներ՝ ուսման կարճատև տևողությամբ։

Վերականգնման շրջանի տարիներին բանֆակները զգալի դեր էին կատարել բանվոր երիտասարդությանը միջնակարգ կրթություն տալու գործում։ Բանֆակներն ավարտած ուսանողության ճնշող մեծամասնությունը մտնում էր բարձրագույն դպրոցներ, ավելացնելով ուսանողության բանվորական կորիզը։ Հաշվի առնելով այդ լուսավորության օրգաններն սկսեցին ավելի ևս ուշադրություն դարձնել բանֆակների ընդարձակման և նրանց ուսումնա-կրթական գործի բարելավման վրա։

ՀԿ(բ)Պ ԿԿ-ի 1926 թվականի հունիսյան պլենումը քննության առավ ռեսպուբլիկայի դպրոցաշինարարության հարցերը՝ կապված սոցիալիստական ինդուստրացման խնդիրների հետ։ Պլենումի որոշման մեջ ասված է. «Ժողովրդական լուսավորության գործի պլանավորման հարցում անհրաժեշտ է ղեկավարվել հետևյալ հիմնական դրույթներով։ Քաղաքային դպրոցների որպես հիմնական տիպ ընդունել քառամյա, յոթնամյա և լրիվ միջնակարգ աշխատանքային ընդհանուր կրթության դպրոցը, որը պետք է ընդգրկի 8—18 տարեկան հասակի երեխաներին...»[1]։ Գյուղում դպրոցի հիմնական տիպը հանդիսանալու էր քառամյա ընդհանուր կրթական դպրոցը, իսկ նրանից բարձր՝ գյուղերիտ ու լրիվ միջնակարգ դպրոցը։ Ռեսպուբլիկայում ծավալվող սոցիալիստական շինարարությունը միջին որակի կադրերով ապահովելու համար խնդիր դրվեց կազմակերպել քառամյա տեխնիկումներ (ինդուստրիալ, գյուղատնտեսական, մանկավարժական, կոոպերատիվ, գեղարվեստական և այլն)։

ՀԿ(բ)Պ ԿԿ-ի հունիսյան պլենումի որոշումը կարևոր նշանակություն ունեցավ ինչպես դպրոցական ցանցի ընդարձակման, նույնպես և ուսումնա-կրթական գործի բարելավման համար։

Նախառևոլյուցիոն շրջանի համեմատությամբ, 1928/29 ուսումնական տարում ռեսպուբլիկայում մասսայական դպրոցների թիվը 459-ից հասցվեց 846-ի։ Այդ դպրոցներում սովորողների թիվը նույն ուսումնական տարում հասավ 86.225-ի 1914 թվականի 34.738 սովորողի դիմաց[2]։

Դեռ 1925/26 ուսումնական տարում Սովետական Հայաստանը կանգնած էր ընդհանուր պարտադիր տարրական կրթության շեմքին։ Հայաստանում դպրոցական հասակ ունեցող երեխաների ⅔-ը ընդգրկված էին մասսայական

---

[1] Մարքսի, Էնգելսի, Լենինի, Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆոնդ № 15, թղթապանակ 1, թերթ 35։

[2] Տես Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 гг.), էջ 108—109։

դպրոցներում։ Երևան և Լենինական քաղաքներում 8—11 տարեկան հասակի համարյա բոլոր երեխաները ընդգրկված էին առաջին աստիճանի դպրոցներում։ Չնայած դեռևս չէր մտցված ընդհանուր պարտադիր ուսուցումը, սակայն, ըստ էության, այն իրականացված էր Երևանում, Լենինականում և Մեղրի գավառում։

Սովետական Հայաստանի պարտիական և սովետական օրգանները լուրջ ուշադրություն էին դարձնում ռեսպուբլիկայում ապրող մյուս ժողովուրդների դպրոցական կրթության աշխատանքների վրա։ 1926—27 ուս. տարում գործում էին ադրբեջանական 93 առաջին աստիճանի, երեք յոթնամյա դպրոց։ Երևանի բանֆակին կից բացվեց ադրբեջանական բաժին։ Այդ նույն տարիներին ռուսական առաջին աստիճանի դպրոցների թիվը հասավ 20-ի, յոթնամյա դպրոցներինը՝ երեքի։

Ապարանի և Թալինի գավառներում գործում էր քրդական առաջին աստիճանի 10 դպրոց, Ալավերդու գավառակում բացվել էր հունական 5 դպրոց, Երևանի գավառում՝ ասորական 4 դպրոց։ Այսպիսով, Հայաստանում գործում էր 162 դպրոց, որտեղ իրենց մայրենի լեզվով կրթություն էին ստանում ադրբեջանցի, ռուս, քուրդ, հույն և ասորի երեխաները։

Ռեսպուբլիկայում զգալի աշխատանք կատարվեց նաև տեխնիկումների, բանֆակների ու գյուղերիտ դպրոցների ցանցի ընդարձակման ու նրանց ուսումնա-կրթական գործի կազմակերպման ուղղությամբ։ 1927—1928 ուսումնական տարում Հայաստանում գործում էին 8 մանկավարժական, 2 ինդուստրիալ-շինարարական տեխնիկում, որոնցում սովորում էին ավելի քան 1500 ուսանող-ուսանողուհիներ։

1929 թվականին Հայաստանում գոյություն ունեցող 3 բանֆակներում (երկուսը Երևանում, մեկը Լենինականում) սովորում էին 600 բանվոր երիտասարդներ։ Ամեն տարի միջին հաշվով ավարտում էր մոտ 100 մարդ, որոնց մեծ մասը ընդունվում էին Հայաստանի կամ ՍՍՌՄ բարձրագույն կրթության հաստատություններում։

Դպրոցաշինաբարության բնագավառում ձեռք բերված այս հաջողություններն արդյունք էին լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության։ Եթե վերականգնման շրջանի տարիները հանդիսացան Սովետական Հայաստանի դպրոցների կազմակերպական շրջան, ապա ինդուստրացման շրջանի տարիները հնարավորություն տվին հատուկ ուշադրություն դարձնելու ուսման որակի վրա։ 1926 թվականին Հայկական ՍՍՌ Կենտգործկոմի երրորդ նստաշրջանում իր տված զեկուցման մեջ լուսավորության ժողկոմ Ա. Մռավյանն ասում էր. «...Լուսժողկոմատի մինչև այժմ կատարած աշխատանքների պատկերը բնութագրելով, իբրև անհրաժեշտ կազմակերպական աշխատանքների մի շրջան, այժմ մենք հնարավորություն ենք ստացել գաղափարական բովանդակությամբ, որակի մտքով ավելի խոր աշխատանքներ ծավալելու արդեն գոյություն ունեցող լուսավորության ցանցում։ Այդ աշխատանքներն արդեն սկսված են»[1]։

Լուսավորության գործին քիչ վնաս չհասցրին տրոցկիստա-բուխարինական կոնտրռևոլյուցիոն տարրերը։ Վ. Ն. Շուլկինը փութաջանորեն պրոպագանդում էր սովետական դպրոցում կիրառել ամերիկյան ամենառեակցիոն մանկավարժներ Ջոն Դուիի, Կոլինգսիի, Կիլ-Պատրիկի և մյուսների «մեթոդները»։ Ժողո-

---

[1] Տես «Խորհրդային Հայաստան», 1926, № 120։

վրրդական լուսավորության ֆրոնտում խցկված թշնամիներին հաջողվել էր Սովետական Միության մի քանի վայրերում, այդ թվում և Սովետական Հայաստանի որոշ դպրոցներում, մտցնել, այսպես կոչված, «պրոեկտների» և «դալտոն պլան» «մեթոդները»։

Սովետական ուսուցչությունը համառ կերպով դիմագրում էր մեր դպրոցի խնդիրներին ու նպատակներին միանգամայն խորթ, վնասակար ու ռեակցիոն այդ «մեթոդների» կիրառմանը։ Կոմունիստական պարտիայի ցուցումներով՝ արմատախիլ արվեցին ռեակցիոն այդ բոլոր տեսակի «մեթոդները»։

Մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության խնդիրները հաջողությամբ լուծելու համար, ընդլայնվեցին մեթոդական աշխատանքի ձևերը։ 1928 թվականին ռեսպուբլիկայի բոլոր գավառներում կազմակերպվեցին մեթոդական կաբինետներ, իսկ գավառային լուսբաժիններին կից ստեղծվեցին մեթոդ բյուրոներ, ենթաշրջաններում՝ մանկավարժական խորհուրդներ։ Ուսումնա-մեթոդական այդ հաստատությունների շուրջն էին համախմբվում Հայաստանի լավագույն մանկավարժները և իրենց ձեռք բերած փորձը հաղորդում երիտասարդ ուսուցչությանը։ Աչքի ընկնող մանկավարժներ ընկ. ընկ. Սիմակ Սահակյանը, Կարախանյանը, Սանթրոսյանը, Շավարշյանը, Խաչատրյանը, Միրաքյանը և շատ ուրիշներ մեծ ջանասիրությամբ օգնում էին երիտասարդ ուսուցիչներին, հաղորդելով իրենց մանկավարժական գիտելիքներն ու փորձը։ Սովետական դպրոցում մանկավարժական մեթոդական ողջ աշխատանքը տարվում էր այն սկզբունքով, որպեսզի ուսուցիչը դասավանդման ընթացքում ապահովեր դասի տեսական, գաղափարական բարձր մակարդակը։

Սովետական դպրոցում ուսումնա-կրթական գործի կազմակերպման խնդրում անգնահատելի է սովետական ուսուցչի դերը։ ՍՍՌՄ-ում ժողովրդական ուսուցիչը շրջապատված է ընդհանուրի հոգատարությամբ, նա միշտ եղել և մնում է Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության ուշադրության կենտրոնում։ Հատուկ ուշադրություն դարձվեց կուլտուրական ֆրոնտի աշխատողների, հատկապես ուսուցչության նյութական-կենցաղային պայմանների բարելավման վրա։ 1923 թվականի համեմատությամբ, 1927 թվականին կրկնապատկվեց ուսուցիչների աշխատավարձը։ 1928 թվականից մտցվեց երկարամյա ծառայության պարգև հավելյալ վարձատրության սիստեմը։

Դպրոցական գործի կազմակերպման խնդրում նկատելի դեր էր կատարում Լենինյան կոմերիտմիությունը և պիոներական կազմակերպությունը։

1928 թվականի մարտին ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեում հրավիրվեց հատուկ խորհրդակցություն, որտեղ քննության առնվեց պիոներական կազմակերպությունների անելիքները դպրոցում, իսկ 1828 թվականի հունիսին Կենտրոնական Կոմիտեն որոշում ընդունեց պիոներական շարժման դրության և նրա մոտակա խնդիրների մասին, որը խոշոր նշանակություն ունեցավ պատանի պիոներների կոմունիստական դաստիարակության գործում։

ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի ցուցումով ՀամԼԿԵՄ Կենտկոմը 1929 թվականի օգոստոսին կազմակերպեց պատանի պիոներների Համամիութենական առաջին հավաքը, որը հանդիսացավ Սովետական Միության պիոներական կազմակերպության հասարակական գործունեության ցուցադրումը։ Ուժեղացավ պիոներական կազմակերպությունների ազդեցությունը դպրոցական երեխաների վրա։

Ինդուստրացման համար մղվող պայքարի տարիներին մասսայական դրպ-

բոցների ցանցը երկրում այնքան էր ընդարձակվել, որ արդեն նախապայմաններ էին ստեղծվել ընդհանուր տարրական պարտադիր կրթության իրագործման համար։

Առաջին հնգամյակի երկրորդ տարվանից ամբողջ ՍՍՌՄ-ում, այդ թվում և նրա անբաժանելի մասը կազմող Սովետական Հայաստանում մտցվեց տարրական ընդհանուր ուսուցում։

Այսպիսով, 1926—1929 թվականները հանդիսանում են դպրոցական ցանցի զգալի ընդարձակման ու ուսումնա-կրթական գործի կազմակերպման տարիներ։ Հրապարակվեց ՀամԿ(բ)Պ ԿԿ-ի 1931 թվականի սեպտեմբերի 5-ի պատմական որոշումը, որը շրջադարձային կետ հանդիսացավ ՍՍՌՄ ժողովրդական կրթության գործի արմատական բարելավման խնդրում։

* * *

Սոցիալիստական ինդուստրացման առաջին իսկ տարիներից Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունն ամբողջ սրությամբ առաջ քաշեցին կադրերին բարձրագույն կրթություն տալու հարցը։ Ժողովրդական տնտեսությունը կարիք ուներ տասնյակ հազարավոր ինժեներա-տեխնիկական որակյալ մասնագետների։ Այդ ժամանակ մեր երկրի ինժեներա-տեխնիկական անձնակազմի զգալի մասը չուներ բարձրագույն կրթություն, աճել էր պրակտիկ աշխատանքում։ 1927 թվականին Շախտի գործի դատավարությունից պարզվեց, որ հին կարգերից եկած մասնագետների որոշ մասը թշնամաբար էր տրամադրված դեպի Սովետական պետությունը։ Մասնագետ կադրերի սուր պակասը լուրջ վտանգի տակ էր դնում մեր ինդուստրիայի ու սոցիալիստական գյուղի զարգացումը։ Ի. Վ. Ստալինը, նշելով սոցիալիստական ինդուստրացման բնագավառում գոյություն ունեցող դժվարությունները հաղթահարելու անհրաժեշտությունը, ասել է. «... ծանր արդյունաբերության կառուցման պրոբլեմը չի կարելի լիովին լուծված համարել, մինչև չլուծվի կադրերի պրոբլեմը։ Այստեղից՝ պարտիայի խնդիրը — ընդհուպ ձեռնամուխ լինել կադրերի պրոբլեմին և ինչպես էլ լինի տիրել այդ ամրոցին»[1]։

1928 թվականի հուլիս ամսին կայացավ ՀամԿ(բ)Պ ԿԿ-ի պլենումը, որտեղ քննության ենթարկվեց նոր մասնագետ կադրերի պատրաստման գործի ընթացքը։ Պլենումը նշեց այն խիստ տարբերությունը, որ կար ժողովրդական տնտեսության հարաճուն վերելքի ու բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստման ընթացքի մեջ, և ընդունեց հատուկ որոշում՝ բարձրագույն դպրոցների ցանցի ընդարձակման, ուսումնա-կրթական գործի բարելավման մասին։

1928—29 ուսումնական տարվանից զգալի փոփոխություններ մտցվեցին բարձրագույն հաստատություններում։

Մի քանի մասնագիտական բարձրագույն հաստատություններ հանձնվեցին Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդին և այլ գերատեսչական օրգանների։ Այդ փորձն իրեն արդարացրեց։ Հատուկ ուշադրություն դարձվեց բարձրագույն ուսումնական հաստատություններում և տեխնիկումներում՝ բանվոր երիտասարդության կորիզը մեծացնելու վրա։ Համալսարաններին և մաս-

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 12, էջ 140։

նագիտական ինստիտուտներին կից կազմակերպվեցին նախապատրաստական կուրսեր և հատուկ խմբեր, որտեղ նրանք անցնում էին միջնակարգ ծրագրով սահմանված գիտելիքներ։

Պարտիայի և Սովետական կառավարության այս ձեռնարկումները խթան հանդիսացան նոր տեխնիկական ինտելիգենցիայի ստեղծմանը։ Սակայն պարտիայի այս կոնկրետ միջոցառումները հանդիպեցին թշնամի տարրերի դիմադրությանը։ Նրանք բոլոր միջոցներով փորձում էին ձախողել բանվոր դասակարգից տեխնիկական ինտելիգենցիայի պատրաստման գործը։ Թշնամիների դիմադրությունը կոտրվեց, մեր բարձրագույն դպրոցների աշխատանքը լիովին ի սպաս դրվեց երկրի սոցիալիստական ինդուստրացման խնդիրների կենսագործմանը։

Ի. Վ. Ստալինը նշում էր. «Բանվոր դասակարգը չի կարող դառնալ երկրի իսկական տերը, եթե նա չկարողանա ազատվել անկուլտուրականությունից, եթե նա չկարողանա ստեղծել իր սեփական ինտելիգենցիան, եթե նա չտիրապետի գիտությանը և չկարողանա կառավարել տնտեսությունը գիտության հիման վրա»[1]։

Ռեսպուբլիկայի բարձրագույն դպրոցները շրջադարձ կատարեցին դեպի պրակտիկ կյանքը։ Ուսանողները ուսուցման գործնական մասն անց էին կացնում արդյունաբերության մեջ՝ գործարաններում, հանքերում, երկաթուղային տրանսպորտում և գյուղատնտեսության մեջ։

Սոցիալիստական ինդուստրիայի հետագա զարգացումը հրամայական խնդիր էր դնում՝ ռեսպուբլիկայում ստեղծել տեխնիկական ինտելիգենցիայի ազգային կադրեր։ Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը ձեռնամուխ եղան նաև այդ կարևոր պրոբլեմի լուծմանը։

Մի շարք ազգային ռեսպուբլիկաներում, որոնք ցարիզմի օրով զրկված էին բարձրագույն դպրոցներ ունենալու հնարավորությունից, ՍՍՌՄ վերականգնման շրջանի առաջին տարիներին բացվեցին բարձրագույն ուսումնական հաստատություններ։

1921 թվականին Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանում հիմք դրվեց նաև ժողովրդական Համալսարանին։ 1922 թվականին բացվեց Երաժշտական ստուդիան։ ՍՍՌՄ կառավարության հատուկ որոշմամբ 1928 թվականին Երևանում բացվեց Համամիութենական անասնաբուժական-անասնապահական ինստիտուտը։

Սոցիալիստական ինդուստրացման տարիներին Սովետական Հայաստանի համար բարձրագույն կրթության կադրերի պատրաստման առաջատար դերն իր վրա էր վերցրել Երևանի Պետական համալսարանը։

Ինդուստրացման շրջանի առաջին տարիներից ընդարձակվեց համալսարանը, բացվեցին նոր ֆակուլտետներ։ 1929—30 ուս. տարում սովորողների թիվը հասավ ավելի քան 1300 մարդու, այդ նույն տարում համալսարանն ուներ հինգ ֆակուլտետ՝ տեխնիկական, սոց-տնտեսագիտական, գյուղատնտեսական, բժշկական, իրավաբանական և մանկավարժական. վերջինս երեք բաժիններով՝ պատմագրական, ֆիզիկո-մաթեմատիկական և բիոլոգիական։ Պետական համալսարանի շուրջն էին համախմբված Հայաստանի գիտա-մանկավարժական ամենաաչքի ընկնող մասնագետները։ 1925 թվականին Հայկական

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 11, էջ 87։

ՍՍՌ Լուսավորության ժողկոմատը համալսարանի վարչության միջնորդությամբ գիտա-մանկավարժական վաստակ ունեցող 10 դասախոսների շնորհեց պրոֆեսորի կոչում։ 1924/25 ուս. տարվա համեմատությամբ 1929/30 ուս. տարում Պետական համալսարանում պրոֆեսոր-դասախոսների թիվը կրկնապատկվեց։

Հայաստանի պարտիական և սովետական օրգաններն առանձնահատուկ ուշադրություն էին դարձնում Պետական համալսարանի դասախոսական կազմը նոր, երիտասարդ գիտական կադրերով համալրելու խնդրի վրա։

Հայաստանի Կենտգործկոմի 4-րդ գումարման երրորդ նստաշրջանը զբաղվեց նաև Պետական համալսարանի աշխատանքների բարելավման հարցով։ 1926 թվականի հունվարին ընդունված որոշման մեջ նշեց. «Գտնել անհրաժեշտ՝ համալսարանի համար պատրաստել նոր գիտական կադրեր և այդ նպատակով համալսարանին առընթեր թողնել հաջող ավարտողներին, գիտական պատրաստություն ձեռք բերելու համար, այլև ուղարկել (գործուղել — Վ. Մ.) նրանց Խորհրդային Միություն... համապատասխան գիտական հաստատություններում լրացնել իրենց մասնագիտությունը»[1]։

1927/28 ուսումնական տարվանից բացվեց Համալսարանի ասպիրանտուրան։

Կազմակերպական շրջան էր ապրում նոր բացված Անասնապահական-անասնաբուժական ինստիտուտը։ Այս ինստիտուտը հենց առաջին տարվանից ուներ հայկական և ռուսական բաժիններ։ Ինստիտուտի ուսումնա-կրթական գործի կազմակերպման ու այն պրոֆեսորա-դասախոսական կադրերով ապահովելու գործում մեծ օգնություն կազմակերպեցին Մոսկվայի, Լենինգրադի համանման ինստիտուտները և գիտա-հետազոտական հաստատությունները։ Համամիութենական Անասնապահական-անասնաբուժական ինստիտուտն առաջին տարվանից արդեն ուներ կենդանաբանության, անատոմիայի, հյուսվածաբանության, սաղմնաբանության, ընախոսության, ընդհանուր զոոտեխնիկայի, երկրագործության հիմունքների և այլ ամբիոններ։ Առաջին տարվանից ինստիտուտն ընդունեց միջնակարգ դպրոցն ավարտած 120 երիտասարդներ, որոնց մի զգալի մասը գործուղված էր եղբայրական ռեսպուբլիկաներից՝ Ռուսաստանից, Վրաստանից, Ադրբեջանից և Միջին Ասիական ռեսպուբլիկաներից։ Ինստիտուտ ընդունված ուսանողության մեծ մասը նախկին բանվորներ էին կամ աշխատավոր գյուղացիների ու բանվորների զավակներ։

Սովետական Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների աշխատանքների բարելավման գործում վճռական նշանակություն ունեցավ ՀամԿ(բ)Պ ԿԿ-ի 1928 թվականի հունիսյան պլենումի որոշումը։ Այդ որոշումից հետո, Հայաստանի պարտիական, սովետական օրգանների ցուցումներով վերանայվեցին բարձրագույն դպրոցների ուսման պլաններն ու ծրագրերը, ավելացվեցին գործնական դասերի ժամերը, կազմակերպվեցին մասնագիտական լաբորատորիաներ։ 1929 թվականից Համալսարանի բոլոր ֆակուլտետներն անցան ցերեկային հերթի պարապմունքների, որը կարևոր նշանակություն ունեցավ ուսումնա-կրթական գործի կազմակերպման համար։ Ուսանողությունն ապահովվեց պետական թոշակով։

1928 թվականից է՛լ ավելի մեծ թափ ստացավ դպրոցական շինարարությունը Հայաստանում։

---

[1] Տե՛ս «Ժողովրդական լուսավորություն» ամսագիր, 1926, № 2։

Ամենակարճ ժամանակում կառուցվեցին և գործարկվեցին Պետական համալսարանի անատոմիկումի շենքը, ֆիզիկո-քիմիական լաբորատորիայի կորպուսը, կաթնատնտեսական լաբորատորիան և այլն։ ՍՍՌՄ կառավարությունը 1928/29 թվականին մեկ և կես միլիոն ռուբլի հատկացրեց Երևանի Համամիութենական Անասնաբուժական-անասնապահական ինստիտուտի նոր շենքի և հանրակացարանների կառուցման համար։ Մասսայական դպրոցների համար նոր շենքեր էին կառուցվում ինչպես Երևանում, նույնպես և ռեսպուբլիկայի մյուս քաղաքներում ու շատ գյուղերում։

Ազգային ռեսպուբլիկաների մարզերի համար բարձրագույն կրթությամբ որակյալ կադրերի պատրաստման խնդրում անգնահատելի դեր էին կատարում Սովետական Միության կենտրոնական քաղաքների, հատկապես Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի բարձրագույն հաստատությունները, գիտա-հետազոտական հիմնարկները, որտեղ սովորում էին մեծ թվով երիտասարդներ նաև Սովետական Հայաստանից։

Այսպիսով, Սովետական իշխանությունը սոցիալիստական ինդուստրացման տարիներին ազգային ռեսպուբլիկաների անհավասարությունն ու հետամնացությունը վերացնում էր ո՛չ միայն սոցիալիստական արդյունաբերության օջախներ ստեղծելով, հզոր գործարանների, ֆաբրիկաների, հանքերի, էլեկտրակայանների, երկաթուղային մագիստրալների կառուցումով, այլև ստեղծում էր ազգային կադրեր, ազգային սովետական ինտելիգենցիա։

Սոցիալիստական ինդուստրացման ժամանակաշրջանում ժողովրդական կրթության, կադրերի պատրաստման գործում ձեռք բերված հաջողությունների հիման վրա ինչպես ՍՍՌՄ-ում, այնպես էլ Սովետական Հայաստանում մեծ հեռանկարներ ստեղծվեցին ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի հետագա բուռն զարգացման համար։

Ինչպես ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների, նույնպես և հայ ժողովրդի կուլտուրան, արվեստը, գիտությունը ծաղկում է Սովետական Միության եղբայրական ժողովուրդների կուլտուրայի փոխադարձ ամուր կապերի հիման վրա, ամենից առաջ ռուս մեծ ժողովրդի հոյակապ կուլտուրայի հետ սերտորեն կապված։ Այս ամենն անգնահատելի դեր խաղացին մեր երկրի սոցիալիստական ազգերի միջև բարեկամական հարաբերություններն ամրապնդելու, նրանց միջև եղբայրական համագործակցություն ստեղծելու գործում։

1930 թվականից սովետական ժողովուրդը թևակոխեց կուլտուրական վերելքի մի նոր փուլ։